ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Էջմիածին համայնքի ավագանու «Էջմիածին համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի որոշումը կատարելու և բյուջեի վարչական մասի եկամուտների ավելացումը Էջմիածին համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները

1. Հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 26.01.2021թ. թիվ 2 նիստի թիվ 12 և թիվ 13 որոշումները.

1.1. Ավելացնել բյուջեի վարչական մասի եկամուտների <Տեղական վճարներ> 1351 տողը 13000.0 հազ. դրամ:

1.2. Բյուջեի վարչական մասի ծախսը ավելացնել 13000.0 հազ. դրամ և ուղղել հանգստի և սպորտի ծառայությունների /բաժին 08, խումբ 1, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածին /հոդ. 4511/:

1.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

2. Նվազեցնել՝

2.1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը /բաժին 11, խումբ 1, դաս 2, հոդ. 4891/ 34250.0 հազ. դրամ:

2.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Ավելացնել՝

3.1. Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածին /հոդ. 4269/ 3250.0 հազ. դրամ:

3.2. Փողոցների լուսավորության /բաժին 06, խումբ 4, դաս 1/ <Էներգետիկ ծառայություններ> հոդվածին /հոդ. 4212/ 11000.0 հազ. դրամ:

3.3. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածին /հոդ. 4269/ 20000.0 հազ. դրամ:

3.4. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Էջմիածին համայնքի ավագանու 2021 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները: